

## Ս. ՎԱՐԴԱՆԱՑ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹ-ՈՌ-ՈՒՄ

Փետրվարի 7-ին, Վարդանանց խորհրդին հաղորդվելու համար, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր հավաքվել հավաքացյալ հայորդիների մի հոծ բազմություն: Հավաքվել էր ոչ միայն հաղորդակից դասնալու համազգային այս մեծ գունակագրությանը, այլ նաև շնորհավորելու Նորին Սրբությանը, քանի որ Վարդանաց փոնը նաև Անվանակոչության օրն է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Առավոտյան մասուցված Ս. Պատրարքի ընթացքում կապարվեց Հայրապետական մատյանք, որի ընթացքում ներկա հավաքացյալ հայորդիները, մեր հոգևորականաց դասի գլխավորությամբ, աղոթք բարձրացրեցին առ Ասրված՝ Վեհափառ Հայրապետի «յամերամ ժամանակօք ապահով անդրութեան» և «Ասրուսածակառոյց Մեծի Աթոռոյն անսասանութեան» համար:

Երեկոյան ժամը 17.00-ին, Վարդանանց փոնը արժանի շուրջով նշելու համար, հայ հավաքացյալների առաջ նորից իր հյուրընկալ դռներն էր բացել Վեհարանի հանդիսաւթյունների դասինքը, որիներ Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ ու Գնորդյան Հոգևոր Ծեմարանի ջանքերով նշելոց Վարդանանց փոնը:

Տերունական «Հայր մեր»-ից և Հայասրանի Հանրապետության օրիներգերից հետո հետեւ Ծեմարանի քայլերգը, որին հաջորդեց Գնորդյան Հոգևոր Ծեմարանի գլուխությունը S. Եղիշե ավագ քեն. Սարգսյանի բացման խոսքը.

**Այսօր հիշարակի օրն է «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որը կարարեցան ի մեծի պատերազմին»:**

Պատրիահայր Մովսես Խորենացին, իր անմահ Պատրիարքան մեջ խոսելով մեր ժողովրդի անցած հերոսական ուղու մասին, գրում է: «Զի թէպէս ևս եւք Ածու տիքը, ևս թուով յոյշ ընդ փոքր սահմանեալ ևս զօրութեանը տիկար, ... սակայն բազում գործ արութեան զբանին գործեալ ևս ի մերում աշխարհիս արժանի գրոյ յիշարակի»:

Վարդանանց պատերազմի հերոսապարունք հենց Պատրիահոր նշած արիության, հայրենասիրության և մեր Ս. Եկեղեցու հավիտենական երթ շարունակական դարձնելու հիշարժան գործերից է: Միանշանակ հասկադելով Պատրիահոր ինասպուն խոսքը, ավելացնեմ նաև, որ մեր ժողովրդի 30-դարյան պատրիարքան մեջ երկար է շարքն այն պատրիական սքանչնագործությունների, որոնք ոչ միայն ձևավորեն են ազգային-կրոնական իրական նկարագիրը մեր ազգի, այլև խորհուրդը ու փայլ գովել մեր պատրիարքանը և մեր բազմախորհուրդ անցյալին:

... Խոսնկ և աղոթք իմացյալ մահով անմահացած Ս. Վարդանանց քաջամարդիկներին և Ղեղուղանց քահանաներին, որոնք մարտիրոսացան, որ ասդի մեր Հայրենիքը և մեր Ս. Եկեղեցին:

### Վեհափառ Տեր.

Այսօրվա հանդեսի բացման այս հակիրճ խոսքի ավարտից առաջ պարտավորություն ունեմ Անդրկանների կողմից շնորհավորել նաև Ձերդ Սորությանը, անվանակոչության առթիվ, ի սրբե ցանկանալ բոլորի կողմից բացառություն և բեղմնավոր հովապելություն՝ ի փառ և ի շինություն Ա. Վարդանանց և Ս. Ղևոնյանց նահարակությամբ փրկված և համբաւելական կյանքի սրբազն իրավունք վաստակած մեր Ս. Եկեղեցու և ի վայելու մըն Հայրենիքի և աշխարհասփյուռ հայորդիների:

Տեսուչ Նոր բացման խոսքից հետո «Վարդանաց խորհուրդը» բանախոսությամբ հանդես եկավ Գնորգյան և Վազգենյան Շոգենոր Ծեմարանների գրաբարի դասախոս, բոլորի կողմից սիրված պրես Պետրոս Բետիրյանը, որն իր բանախոսության մեջ, մեր պարմության նմանապիհա սիրանքները նկատի ունենալով, Վրմին Վեզների հանգույն հայերին որակեց իբրև՝ «պարբությամբ չհաղթված ժողովուրդ»: Բանախոսը, անդրադառնալով Վասակ-Վարդան հարաբերություններին, դրանք թողեց պարմարանների դադին՝ ի մասնավորի շնչփելով այն հանգամանքը, որ առավել կարևոր ժողովրդի ընդունությունն էր, և թե ժողովուրդը, առաջնորդությամբ Վարդանի, կարո՞ղ էր այլ կերպ վարվել: Անշուշը՝ ոչ:

«451-ի օրվա մարդը՝ դարձել է դարերի հայ մարդը: Նա բոլոր մահկանացուների նման մարմնական կարճափն լյանքով է վախճան գգել, սակայն իր հոգով ու մանավանդ ոգով անվախճան ժամանակների մեջ է մտել՝ հիմնավորապես», - նշեց իր խոսքում պրես Բետիրյանը՝ պվեացնելով, որ Վարդանը մշտական նեկայություն է մեր ընդունելու մասնակիքներում, մեր մանուկներն իրենց ճանաչել են երգելով՝ «Հայ եմ ես, հայ եմ ես, Քաջ Վարդանի թոռն եմ ես»:

Բանախոսությունից հետո Ծեմարանի Ա լսարանի սան Գոռ Նազարյանի կապարմամբ հնչեց Վ. Թեքեյանի «Մահերգ նահապակաց» բանասդինությունը, որին հաջորդեց «Արեգակն արդարութեան» շարականը: Նաևուն ուսանողության Վեհափառ Հայրապետին, անվանակոչության վոնի կապակցությամբ, շնորհավորեց և Ծեմարանցիների կողմից սրբի խոսք ասաց Զ լսարանի սան Վիզեն սրբ: Շիրվանյանը.

«Տերն բարերար ընդ մեզ դեսանենք յառաջնորդութիւն, չեւ մեր մարդ զօրավար, այլ զօրագույն ամենայն մարդիրուաց»:

Ավարայրի մարդից առաջ Ս. Վարդանի այս խոսքերը, իրենց պարզությամբ հանդերձ, հրաշալիորեն պերճ և խոսուն են և իրենց հնությամբ՝ միշտ արդիական և ժամանակակից:

1551 տարիներ առաջ վասն Դիտուի և վասն Հայրենյաց նահապակալած հայ քաջորդիք դավանեցին ու վկայեցին Քրիստոսին թշնամու առջև՝ չվահենակով մարմինը սպանողներից, և եղան «նորասքանչ լուսատրիչը» և «նահապակը պանծալիք»:

Եղան լուսավորիչներ, որովհետք օրիասի պահին չերկմագին, այլ ի-  
րենց կյանքով շարունակեցին Սրբոց Թաղենու և Բարդուղիմենու առաջա-  
ների և առաջելապատիլ Սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզությունը հայոց  
մեջ: Ավելարանանունդ հոգով ու մոքով դարերին փոխանցեցին հայոց  
քրիստոնեական դպրոցի անսպահը լուսն ու անհաղթ հոգին: Անմահ  
Քրիստոս է այդ դպրոցի վարդապետը, և այն հիմնամուր է հավատի մեր  
Շոր աջով հասկարգած, Ներսն Մեծի ձեռքով բարձրացած, Սահակ-Մաշ-  
տոցի սիրանքով հայացած ու Թարգմանչաց ոգով ընդմիշտ գորացած:

«Ուստի մեր ընդ Աստուծոյ է եւ ոչ ընդ մարդկան». այս էր Վարդանանց  
պատրասխանը փորձության պահին ամբարտանության ու բռնության ներ-  
քո:

Այսօրվա սուրբ խորհրդով Վարդանանք մեզ հետ են, նայում են մեզ եր-  
կընքից, հոգոց հոգի զրոցում մեզ հետ, պատմում, թե ինչպես սիրեց Վար-  
դանը Տայրենին ու Սուրբ Եկեղեցին. որ գարնան ծաղկությով լեցուն Ավա-  
րայրի դաշտում, որը ներկվեց վարդագոյն արյամբ, իրենք դիմանում էին  
հայոց այսօր՝ քրիստոնեակավար ու նորոգված պետրականությանը:

Տիրավի, հերոսական ու պանծալիք հայոց պատմությունը ներշնչանքի  
անսպատ աղբյուր է մեզ համար: Սուրբ Վարդանանց հիշարակի առջև խո-  
նարհումով այսօր ուսանողներս կոչում ենք միմյանց. «Մարտնիացն ճշշ-  
մարդից եկայց եւ մեք հերեւեցուք»: Ընթանանք Վարդանանց հետքերով,  
հավատի ու հավատարմության մեջ չերկմենք և չերկնենք, միշտ հիշենք,  
որ «կահը թերահասարութեան է նշանակ», իսկ թերահավարությունը  
մենք ազգովի վաղոց, շատ վաղոց մերժել ենք: Թող մեր՝ հայոց անմահ քա-  
շերի ժառանգորդներին հոգում միշտ պայծառ մնա Վարդանանց պատրի-  
քուն և հարանորոգ՝ նրանց պատրաստը. «Տէրն բարերար ընդ մեզ դիմանենք  
յառաջնորդութիւն», «չէ մեր մարդ զօրավար, այլ զօրագույն ամենայն  
մարդիրուաց»:

Վեհափառ Տեր, Ձերդ Սրբության անվանակոչության դրուի առիթով  
մեր որդիսական սերն ու երախտազիրությունն ենք բերում Ձեզ: Սրբոց  
Վարդանանց բարեխոսությունն ենք հայցում առ Աստված, որ Իր օրինու-  
թյան ներքո միշտ առաջանեմ ու զորապոր պահի Վեհապետի և Ձերդ  
Սրբության մականի ներքո՝ հասկարուն ու ծաղկյալ Տայոց Եկեղեցին. ա-  
մեն:

Այսուհետք Շոգևոր Ծեմարանի երգչախումբը, մենակադրաբությամբ Դ լսարանի  
սան Էնգար Դայիր Հակոբյանի, հնչեցրեց Ս. Եկմայանի «Լոեց» երգը, որին հաջոր-  
դեցին Ա լսարանի սան Դայկ Ամիրյանի կափարմամբ՝ Վ. Շովիաննիսյանի «Ավա-  
րայրում», և ապա Արսեն Հարությունյանի կափարմամբ՝ Վ. Ձերեյանի «Հիշողու-  
թյուն» բանասքեղծությունները, որոնցից ենքո երգչախումբի կափարմամբ հնչեց «Ի  
զէն» սփեղծագործությունը: Հանդիսության գեղարվեստական մասի ավարտից հե-

փո ներկաների հետ իր մրածումները կիսեց և օրինության իր խոսքն ասաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

### ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

**Միշելի հոգնոր եղբայրներ, դասախոսներ, սաներ և բարեպաշտ հավատացյաներ,**

Կուգենայի իմ սրբի զոհաբանական զգացումները հաղորդել ձեզ, որոնք որպես օրիներգություն և աղոթք դեպի երկինք են բարձրանում: Աղոթք, օրիներգություն զոհաբանության, որ Աստված մեզ պարզեցն է այսպիսի հոգեզմայլ, այսպիսի հարուստ ապրումներով պահեր, օրեր, տրներ, հիշաբակներ, երբ մենք մեր պատմության հայելու մեջ մի պահ փորձում ենք դեսնել արդացողված մեր կյանքը, արդապարկերված մեր անձը, մեր եւոթյունը: Իմ հայացքը հիմա ուղղված է Վարդանանց այս հիասքանչ կրավին, ու Աստված լուս իշեցնի շիրմի վրա հեղինակի՝ Գրիգոր Խանջյանի, և երկնքում թող ցնծա հոգին Հայոց Հայրապետի՝ Վազգեն Ա երջանկահիշաբակ Կաթողիկոսի, որոնք որ մենայուն արժեք եղող նաև այս սքանչելի գործը պարզեցին մեզ, թողեցին մեր ժողովրդին:

Նայում եմ այս կրավին և այնպես դեսնում եմ մեծանուն հայորդյաց դեմքեր: Խորհուրդ է փոխանցված այս պարկերի միջոցով մեզ: Վարդանանքը Ե դարում, որոնք որ ապրում են մեր ժողովրդի զավակաց մեջ անունների փոխվելով, նկարագրեր, կենսագրություններ, ճակատագրեր, բայց եւոթյան մեջ մնում են անփոփոխ, առաքելության մեջ մնում են նույնական՝ հավատարիմ այն արժեքներին, որ ազգովին ովագությունը քրիստոնյա դառնալով, Քրիստոսի հեղնարդներ լինելով, Քրիստոսի ովագին հավատարիմ անդամներ լինելով:

**«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է».**

Ես կարծում եմ, սիրելիներ, որ ամեն մի տոն, որ մեր հայրենը կարգել են ու ավանդել մեզ, որ մենք տոնահմբենք, ոչ թե պարզ հիշաբակներ վկայակոչելու համար է, այլ որպեսզի դրանք աղբյուր դառնան նորոգության, լիքի, որպեսզի դրանք գան դաս դառնալու, պարզիրան դառնալու, պատգամ դառնալու մեզ, որոնցով մենք զինվենք, որոնցով մենք գտնենք մեր կյանքի ճիշդ ճանապարհը, ուղին ու ապրենք Աստվոծով, Աստվոծուն հավատարիմ ընթացքով:

**«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է».**

Այս բառերը երբ փոխադրում ենք մերօրյա կյանքի շրջանակներից ներս, ակամայից հասպարում ենք, թե մեր ժողովրդի որքան զավակներ այսօր ապրում են ճիշդ հակառակ ընկալումին և ապրումին Վարդանանց այս գաղափարի, որքան մահեր այսօր գիրակցված չեն մեր կյանքում, ոչ ֆիզիկական, այլ բարդական նկատի ունեն այսօր մեր կյանքում, թվարկե-

լու անհրաժեշտություն և կարիք չեմ գգում մեր կյանքում տեղ գրած բարութան չափանիշների անկումը, դրանց հերթանքով արարտավոր երևոյթ ների դրսերությունները զանազան ու զանազան ոլորտներում ու ասպարեզներում, արարտավոր երևոյթները, որոնք բազում հայորդաց հերթին թշվառության մեջ են գցում, որոնք բազում հայորդաց պարճառ են դառնում հայուններով լքելու ու օպար երկրներում, օպար ափերի մեջ իրենց բախտը որոնելու և անվերապահ մահվան գիրկը ներվելու կենդանի մահվան:

Այս իմաստով մենք, որ անընդհատ մեծ դրույթունների ժամանակ ողորդում ենք, ընդգծում ենք, որ Վարդանանց ողին առանց ընդհատումի շարունակական կերպով փոխանցվել է մեզ, ապրում է յուրաքանչյուր դարի, յուրաքանչյուր սերունդի մեջ, ակամայից ցավալի կերպով հասկապում ենք թե որքան հեռու ենք մենք այսօր այդ ոգուց, այդ իրականությունից: Կրոնական կազմակերպություններից և սփյուռյան մեր համայնքներից դուրս այսօր, հայաստանում և նախկին Խորհրդային Սիության մեջ, այդ հասկացությունը՝ Վարդանանց դրույթունները, վերացել են մեր կյանքից:

Անդրադառնում եմ հիմա, որ դեռևս անցյալ տարի, փառք Ասրծո, մեր խորհրդարանը հոչակեց Վարդանանց դրույթ պատրիարքական տոն, որը և նորից մեզ հույսով է լեցնում, որ առաջիկա տարիներին հավանաբար նոր սկիզբ դրվի Վարդանանց դրույթաբություններին, թեպետք անցնող տարիների ընթացքին մենք, որպես Եկեղեցի, փորձ կարարեցինք վերակենդանացնելու այդ ավանդույթը, այդ սովորույթը մեր ժողովրդի կյանքից ներս: Ինչ եւ ես կարծում եմ, որ մենք, որպես Եկեղեցի, պետք է որ միշտ հնչեցնենք, ոստիցնենք, փոխանցնենք մեր ժողովրդի զավակաց, նրանց գիտակցությանը հասցնենք, որ ինչպես ասկեց ասսրեդ, Ավարայրի պատրերազմը շարունական պատերազմ է իր ձևերի մեջ:

Եր երևոյթի մեջ այն փոփոխական՝ երբեմն նաև կրկնությունն է Ավարայրի իմաստային առումով, բայց երբեմն խորհրդանշական քնոյթ է սպանում, այսինքն պատերազմական իրավիճակների մեջ չենք ներեր չեն արձակվում, թնդանոթները չեն որոշում, սակայն բարոյական պատրերազմի դաշտում ենք մենք ապրում, և որ մենք պարտավոր ենք զինված նոյն ոգով, նոյն նախանձախնդրությանը, նոյն հավագարմության զգացումներով հանդեպ մեր նախնյաց սուրբ հավատը պահպանելու այն ամբողջ հոգեր ժառանգությունը, որ ավանդ է թողնվել մեզ մեր հայրերից, որոնցով ապրված կյանքը միայն երաշխիք կարող է լինել մեր հարժադարձության, մեր հավերժության:

Վարդանանք այս գաղափարին եին հասել: Վարդանանց պատրերազմը խոճի ազատության համար մղված առաջին պատերազմն էր ազգերի և պետությունների կյանքում: Եվ ակամայից մղածում եմ, թե այսօր որքան օպար կազմակերպություններ մուսք են գործել հայաստան և փորձում են

մեր ժողովրդի գիրակցությանը հասցնել խղճի ազատության գաղափարը այն դեպքում, եռք 1551 տարիներ մեր ժողովուրդը գիրի, թե ինչ է նշանակում ապրել խղճի ազատության համար, որ իր մասով է այդ ազատությունը կուել, կոփել, և այսօր ոչ թե խղճի ազատություն է, որ պահանջում են մեզանից, այլ այդ ազատությունն է, որ ուզում են իրեւ մեզանից, բայց անվարան է իմ հավատքը, որ մենք պիտի կարողանանք միշտ Վարդանանց հոգին հրնչացնել մեր ժողովրդի գալակտց գիրակցության մեջ, նրանց սրբերում, և ոչ միայն հնչեցնել, այլև կերպել նրանց եռթյունը այդ ոգով, մեր ընթացքը դարձնել միշտ հաղթական՝ առ Տեր ունեցած սիրով պայմանավորված:

Ես Վարդանանց տոնի այս ուրախ առիթով ուզում եմ մեր գնահատանքը բերել Ծեմարանի տևաչությանը, սանուց, որոնք որ ամեն տարի կազմակերպում են այս տոնակամբությունը, և դա էլ խորհրդանշական է, որ Ծեմարանն է կազմակերպում, որ սաները այդ ոգով կրթվելու ու դաստիարակվելու ճանապարհ վրա են կանգնած, այդ ընթացքն են ապրում:

Մեր գնահատանքն ուզում ենք բերել մեր բանախոս դասախոսին՝ պարուն Պետրոս Բենիդրյանին, որ խնամված մի խուզով ներկայացրեց մեզ խորհուրդը, իմաստը Վարդանանց: Նաև մեր գնահատանքը բոլոր մասնակիցներին, որ հոգեսպար այս գեղեցիկ պահը պարզեցին մեզ: Մենք ուզում ենք այս առիթով նաև մեր շնորհավորանքները բերել օրվա բոլոր հերոսներին, որոնք որ Վարդանանց հերոսամարտի քաջորդիներին, քաջերի անունն են կրում և չունեն տարվա ընթացքին հովանավոր այլ սուրբ իրենց համար, քան այսօրվա հերոսներն են, իրենց պաշտպանները, պահապան հրեշտակները, պահապան հոգիները:

Ես կարծում եմ, որ նույնիսկ եթե հայորդիներն ունեն իրենց համար հովանավոր սրբեր, այդուհանդերձ Վարդանանց տոնը բոլորի համար անվանակոչության օր է և դուն ցանկալի: Եվ իմ մատուանքն է, իմ ցանկությունն է, իմ աղոթքն է, իմ խնդրանքն է, որպեսզի յուրաքանչյուր հայորդի մկրտվի այս օրը, մկրտվի այս օրը Նիկողոսոսին պատգամնվող մկրտությամբ, Վարդանանց ոգիով, որպեսզի միշտ բերկրանքը, ուրախությունը ու զոհաբանության աղոթքը մեր հոգում լինի, որ մեջ մեզ այն կյանք ու զորդ դարձնելու՝ իշխնություն և ի պայծառություն մեր հայրենիքի ու Եկեղեցու:

Թող Ասպարու օրինի մեզ ամենօք և զորացնի Վարդանանց սուրբ խորհրդով, նրանց ճանապարհ հավերժական դարձնի մեր ժողովրդի կյանքում, նրանց ճանապարհը օրինության ճանապարհ դարձնի մեր գալիք սերունդների համար, ամեն: